ՋՕՐԱԿՑԱԿԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ԲՈՆԻՈՐ-ԴՈՅԼ ՀԱՅԱՆՊԱՍՏ ԲԱՆԱՁԵՒԻՆ

Յունիսի 6ին, վեց կոնգրեսմեններ Ներկայացուցիչների Տան մէջ իրենց գործընկերներին բաժանել են միացեալ մի յայտարարութիւն, որի մէջ կոչ են ուղղում զօրաւիգ կանգնել Յունիսի 3ին Ներկայացուցիչների Տան ներկայացուած բանաձեւին։ Նշենք, որ սոյն բանաձեւը ներկայացրել էին 26 կոնգրեսմեններ Դէյվիդ Բոնիորի եւ Ուէյն Օուրնզի գլխաւորութեամբ։ Այն դատապարտում էր խորհրդային եւ ազերի ուժերին հայերի դէմ կատարած յարձակումները եւ կոչ էր անում, որ անմիջապէս վերջ դրուի Ղարաբաղի հայերի բռնագաղթին։

Միացեալ յայտարարութեան տակ ստորագրող վեց կոնգրեսմեններն են Դէյվիդ Բոնիորը, Ուէյն Օուրնզը, Ուիլլիամ Բրումֆիլդը, Բենջամին Քիլմընը, Ռիչարդ Լեհմընը եւ Էդուարդ Ֆեյքընը։ Յայտարարութեան մէջ նշւում են Բոնիոր-Ուէյն բանաձեւի գլխաւոր գծերը։ —